ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Մանուկյան /________/

01. 09. 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի Արզնիի Ս. Սարխոշնի անվան միջնակարգ դպրոց

Դասարան՝ VIIIբ

Դաղեկ՝ Ա. Ասլանյան

«2022-2023թ» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Կիրառել բոլոր մեթոդները ու հնարները աշակերտների մեջ սերմանելու, մշակելու և զարգացնելու սեր դպրոցի, ուսման, դպրոցական կարգ ու կանոնի նկատմամբ:
բ/ Մի փոքր դժվար է այն առումով որ դասարանում տղաների թիվը բավականին մեծ է, սակայն այս առումով նախորդ հինգ տարիների ընթացքում մեծ աշխատանք տարվել է:
գ/ Հետևողական լինեն, որ դպրոցում հակահամաճարակային կանոնները պահպանումը ուսուցման պրոցեսում, խմբերի ճիշտ բաշխումը, հեռավորության պահպանումը:
դ/ Աշխատանք տանել ուսման որակը բարձրացնել, չլինեն անհարգելի բացակայություններ, ուշացումներ,ուշադրությամբ վերաբերվեն դպրոցական գույքին:

Հայեցի դաստիարակություն
Հոգևոր դաստիարակությունը

այս տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու: Այդ իսկ պատճառով աշակերտին պետք է գաղափար տալ քրիստոնեության մասին, ծանոթացնել հոգևոր կենտրոնին՝ էջմիածնին:

- Գեղագիտական դաստիարակությունը
Սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Մարդը դեռ վաղ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և շրջապատող միջավայրն իր բոլոր դրսևորումներով: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացման զգալի մասը:

- Ռազմահայրենասիրական դաստիարակությունը
Գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղակայված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Հետևաբար Մեր առաջնահերթ խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել ռազմահայրենասիրական ոգի:

- Ֆիզիկական դաստիարակությունը

Ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահմանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների ու գիտելիքների համադրում:

- Աշխատանքային դաստիարակություն

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել հանապազօրյա հացը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի: Տունը, դպրոցում և ամենուր պետք է պահպանեն մաքրություն:

- Բնապահպանական դաստիարակությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների զարգացումը: Աշակերտներին զինել բնության պահպանության վերաբերյալ գիտելիքներով: Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք: Ճանաչել և պահպանել բուսական և կենդանական աշխարհ:

- Դպրոց-ընտանիք կապը Ամուր հիմքերի վրա դնել դպրոց-ընտանիք կապը մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր: Անհրաժեշտության դեպքում կատարել տուն, այցելություններ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են ապա հաղթանակն ապահովված է:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս/շ | Ուս. Աշխատանքի բովանդակությունը | Կատարող |
|---|---|---|
| I | Ծանոթացում հակահամաճարակային իրավիճակին | Դասղեկ |
| II | Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը | Դասղեկ |
| III | Արցախյան հերոսամարտը | Դասղեկ |
| IV | Ազատամարտի հերոսները | Դասղեկ |
| V | Ինչ է ընկերությունը և բարեկամությունը | Դասղեկ |
| VI | Ով է ընկերը | Դասղեկ |
| VII | Ինչ է ազնվությունը | Դասղեկ |
| VIII | Արցախյան հերոսամարտի ընթացքում ծնված երգերը | Դասղեկ |
| IX | Ինչպես պահպանել Երկիր մոլորակը | Դասղեկ |
| X | Ինչպես հասկանալ մարդկանց | Դասղեկ |
| XI | Ճանաչենք մեր հայրենիքը | Դասղեկ |
| XII | Պատմական ակնարկ Հայաստանի մասին | Դասղեկ |
| XIII | Ում եմ համարում գեղեցիկ մարդ | Դասղեկ |
| XIV | Ինչ են սովորեցնում Թումանյանի հեքիաթները | Դասղեկ |
| XV | Պատերազմով խաթարված պատանեկություն | Դասղեկ |
| XVI | Արդարացի, անարդար արարքներ | Դասղեկ |
| XVII | Մարդը և օրենքը | Դասղեկ |
| XVIII | Ժպիտը մարդու կյանքում | Դասղեկ |
| XIX | Կանանց միջազգային օր | Դասղեկ |
| XX | Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ | Դասղեկ |
| XXI | Ամեն ինչ գիտեմ առողջության մասին | Դասղեկ |
| XXII | Ինչպես ապացուցել քո ճշմարտությունը | Դասղեկ |
| XXIII | Կարողանալ համ. Մարդ վեհ կոչմանը | Դասղեկ |
| XXIV | Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը | Դասղեկ |
| XXV | Ով է իսկական ընկերը | Դասղեկ |

| | | |
|---|---|---|
| XXVI | Հայոց մեծ եղեռն | Դասղեկ |
| XXVII | Անհատի բարեկրթությունը | Դասղեկ |
| XXVIII | Վատ և լավ սովորություններ | Դասղեկ |
| XXIX | Ճանապարհային անվտանգություն | Դասղեկ |
| XXX | Վատ սովորությունների հետ եանքները | Դասղեկ |
| XXXI | Եթե ես կարողանայի | Դասղեկ |
| XXXII | Իմ երազանքները և նպատակները | Դասղեկ |
| XXXIII | Երբ գալիս է ամառը | Դասղեկ |